

«Բժշկություն, գիտություն և կրթություն» հանդեսում  
հրատարակվող նյութերին ներկայացվող պահանջները

1. Հոդվածները պետք է ապահովեն գիտական և ուսումնասիրողական բարձր մակարդակ, բացահայտեն բժշկության ժամանակակից խնդիրները, լուսաբանեն մասնագետների գիտամանկավարժական և կլինիկական աշխատանքների բովանդակությունը և փորձը, ինչպես նաև ապահովեն տեղեկատվություն և գործնական բնույթի խորհրդատվություն:
2. Հոդվածը պետք է խմբագրություն ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: Հայերեն և ռուսերեն ներկայացնելու դեպքում 1 էջի (ոչ պակաս) սահմաններում տրվում է անգլերեն, իսկ անգլերեն ներկայացնելու դեպքում՝ հայերեն ամփոփում:
3. Հոդվածին կից ներկայացվում է՝
  - ա. ԵՊԲՀ էթիկայի կոմիտեի կողմից տրված կարծիքը,
  - բ. համալսարանի ամբիոնի վարիչի, իսկ այլ հիմնարկներից ներկայացնելու դեպքում՝ հիմնարկի ղեկավարի կողմից տրված նամակը,
  - գ. հայտնագործության կամ ռացիոնալիզատորական առաջարկի դեպքում՝ հեղինակային իրավունքի հաստատված պատճենը կամ վկայականը:
4. Խմբագրություն են ուղարկվում հոդվածի 2 տպագիր օրինակները՝ 210X 297մմ (A4) ձևաչափով. հայերեն ներկայացվում է Arial Armenian, իսկ այլ լեզուների դեպքում՝ Times New Roman տառատեսակով, տառերի չափը՝ 12pt, միջտողային տարածքը՝ 1,5:
5. Հոդվածն անհրաժեշտ է ներկայացնել նաև էլեկտրոնային տարբերակով՝ լազերային սկավառակով (CD) հավաքված Microsoft Word ծրագրով: Սկավառակի վրա անհրաժեշտ է նշել առաջին հեղինակի ազգանունը, անունը և հոդվածի վերնագիրը:
6. Հոդվածը աղյուսակների, նկարների, գրականության ցանկի և ամփոփման հետ չպետք է գերազանցի 14 էջը: Պրոբլեմային և ամփոփիչ հոդվածների ծավալը չպետք է գերազանցի 20 էջը:

7. Հողվածի առաջին էջում գրվում է ձՄԽ-ն, հողվածի անվանումը, հեղինակ (ներ)ի անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը, հիմնարկի անվանումը, որտեղ կատարվել է աշխատանքը և բանալի բառերը (5-8) գրել 3 լեզուներով:
8. Հողվածում պետք է ընդգրկվեն թեմայի արդիականությունը և նպատակը, նյութը և մեթոդները, արդյունքները, քննարկումը, գրականության ցանկը և ամփոփումները (2 լեզուներով):
9. Հողվածի վերջին էջում դրվում են հեղինակի և համահեղինակների ստորագրությունները և առաջին հեղինակի հեռախոսի համարը:
10. Հողվածում բանաձևերը պետք է հավաքված լինեն Microsoft Equation –ով, իսկ քիմիական բանաձևերը՝ համապատասխան խմբագրիչներով: Իյուստրացիաները (լուսանկարներ, քարտեզներ և այլն) պետք է լինեն 3 Mpx-ից ոչ պակաս խտությամբ և ներկայացվեն թվային-էլեկտրոնային տարբերակով: Յուրաքանչյուր իյուստրացիայի տակ նշվում է վերջինիս համարը: Աղյուսակները պետք է հավաքվեն Microsoft Word ծրագրով: Աղյուսակները և գրաֆիկները չեն ընդունվում նկարների տեսքով. դրանք պետք է հավաքված լինեն Microsoft Exel ծրագրով: Հողվածում աղյուսակները և նկարները նշվում են տեքստի համապատասխան տեղում՝ քառակուսի փակագծի մեջ՝ ընդգրկելով դրանց համարները:
11. Գրականության ցանկը տրվում է հողվածի վերջում, առանձին էջի վրա՝ ըստ պահանջվող կարգի (ոչ ավելի, քան 15 աղբյուր, իսկ ամփոփիչ հողվածում՝ մինչև 30)՝ սկզբից նշելով հայրենական, ապա օտարերկրացի հեղինակներին՝ ըստ այբբենական կարգի:
12. Չի թույլատրվում ներկայացնել այլ ամսագրեր ուղարկված կամ արդեն տպագրված հողված:
13. Խմբագրության կողմից տպագրության չընդունված հողվածները ետ են վերադարձվում միայն հեղինակի պահանջով: